ԱՐԱ ՄԱՐԿՈՍ

(Սոֆիա)

ՀԱՅԿԱԿԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍՈՖԻԱՅԵՆ

Սոֆիայի մեջ նշանավոր են քանի մը հայկական արձանագրություններ, բոլորն ալ տապանաքարեր 17, 18 և 19-րդ դարերեն։ Անոնցմէ չորս հատը պահված են Սոֆիայի հնագիտական թանգարանին մեջ, երեք հատը՝ «Սոֆիա քաղաքի» թանգարանին մեջ, իսկ հատ մըն ալ կգտնվի այժմու հայկական գերեզմանատան մեջ, որը որպես հանգստաքար կգործածվի։

Սոֆիայի հնագիտական թանգարանի մեջ պահպանված տապանաքարերը հայտնաբերված են 1896-ին Սոֆիա քաղաքը, պուլվառ «Խրիսթո Պոթեվ»-ի վրա գտնվող երկրագործական նախարարության շենքին ետև փորված ժամանակ։ Անցյալի մեջ այստեղ կգտնվեր հին հայկական գերեզմանատուն։ «Սոֆիա քաղաքի» թանգարանին երեք տապանաքարերը, ինչպես նաև այժմու հայկական գերեզմանատան մեջ գտնվածը, նախապես նախկին հայկական եկեղեցիին* բակն էին, ուր հավանապես տարված են նույն հայկական հին գերեզմանատունեն։ Սույն արձանագրություններուն մեկ մասն, կարգ մը սխալներով և թերիներով, հրատարակված են Գրիգոր Յուրյուճյանի կողմե[1]։ Այդ հոդվածին մեջ սակայն կխոսվի կարգ մը արձանագրություններու մասին, որոնք ներկայիս անհայտ են, հավանաբար ոչնչացված։ Գալով մնացյալ տապանաքարերուն, որոնք կպահվին Սոֆիայի հնագիտական թանգարանին մեջ, անոնք մինչև այժմ չեն հրապարակված և առաջին անգամ մեր կողմե լույս կընծայվին[2]։

Ներկա հոդվածով կհրապարակենք միայն մինչև այժմ Սոֆիայի մեջ պահված հայկական արձանագրությունները։ Նույնպես կանգ կառնենք սույն քաղաքին անհայտացած հին հայկական գաղութին խնդրին շուրջ։

1. Զուգահեռոտնաձև կրանիտյա տապանաքար. պահված է Սոֆիայի հնագիտական թանգարանը. հայտնաբերված է երեք կտոր եղած վիճակով և այդ պատճառով ալ թանգարանի գույքերու տոմարին մեջ սխալ է արձանագրված ամեն մեկ մասը զատ ցուցակագրվով (283, 284, 285)։ Չափեր. պահպանված երկարություն 1,10 մ, բարձրություն 0,42 մ և թանձրություն 0,43 մ։ Մակերեսը երիզված է չորս տափակ ուռուցիկ շրջանակներով, որուն մեջը փորագրված է հետևյալ երեք տողով արձանագրությունը (պատկ. 1— վարը).

---

* Այժմ գոյություն չունի։

1 Գ ր. Ի ւ թ ի ւ ճ ե ա ն, Սոֆիայի եկեղեցւոյն բակը գտնուած տապանաքարերու ընդօրինակութիւնը, «Հանդէս ամսօրեայ», թ. 3—4, 1923, էջ 170—171։

2 Պարտք կհամարենք մեր շնորհակալությունները հայտնել թղթակից-անդամ պրոֆեսոր Վասիլին Բեշևլիևին, որը առաջինը եղավ մեր ուշադրությունը այդ արձանագրություններուն վրա դարձնողը, ինչպես նաև թանգարանին ավագ աշխատակից Վերա Իվանովա-Մավրոդինովային որ պատրաստակամությամբ մեզի տրամադրեց թանգարանի գույքերու տոմարը, անհրաժեշտ փաստեր քաղելու համար։

Պատկ. 1

Արձանագրության բնագիրը
ԱՅՍԷ ՏԱՊԱՆՇ... ՑԻՄ
ՈՒՐԱՏ.. ՆՑՂԱ... ԻՍԱ
ՐՈՒՍԻՆՈՐՓՈ... ՆՈՒՃՉԵ
Արձանագրության լուծումը
Այս է տապան Շ[ուռութն]ցի Մ-
ուրատ[ն]նց Ղա[զարի որդ]ի Սա-
րումին որ փո[խեցաւ թվի]ն ռճձե։

Տապանաքարի երկրորդ և երրորդ բեկորներուն միջև կպակսի խոշոր մաս մը արձանագրության մեկ մասին հետ, որ, սակայն, վստահորեն կլրացվի։ Տառերու մեծությունը 9—10 սանթ. է։ Միահյուս են միայն երրորդ տողի ՈՐ բառին տառերը։

2. Երանիտե տապանաքարի մը վերի կեսին երկու բեկոր, զուգահեռոտնաձև Կպուհպանվի Սոֆիայի հնագիտական թանգարանը։ Երկու բեկորներն ալ կանգուն թիվերով են արձանագրված ցուցակագրին մեջ (թ. 287 և 288)։ Չափեր. երկարություն 1,06 մ, թանձրություն 0,37 մ, պահպանված բարձրություն 0,32 մ։ Մակերեսի կողմը պահված է երկու տողով փորագրված արձանագրություն, որը եղերված է փորաքանդակ գիծով մը։ Այս գիծը իր կարճ կողմերեն կոտրվելով, կկազմե երկուքակուն եռաղեղնաձև կամարներ (պատկ. 1— վերը).

Արձանագրության բնագիրը
ԱՅՍԷՏԱՊԱՆՇ... ՌԹՅԻԵՏԿԱՄ
ԷՆՑԱԿՈԲՈՐԴ... ԱՐԱՊԵՏԻՆՈՐ
Արձանագրության լուծումը
Այս է տապան շ(ու)ո(ու)թ(է)ցի Ետկամ-
էնց Ակոբ(ի) որդ[ի] Կարապետին որ

Տառերու մեծությունը 9—10 սանթ. է։ «ս—է» տառերը ԱՅՍ է բառին մեջ, «պ—ա» ՏԱՊԱՆ-ին մեջ, «ո—բ» ԱԿՈԲ-ին մեջ, «ո—ր» ՈՐԴԻ-ին և «պ—ե» ԿԱՐԱՊԵՏԻՆ բառին մեջ միահյուսված են։

Արձանագրությունը կարելի է վերագրել 18-րդ դարուն։

3. Կրանիտյա տապանաքարի բեկոր։ Պահված է Սոֆիայի հնագիտական թանգարանին մեջ, ինվ. № 282։ Չափեր. պահված երկարություն 0,33 մ, պահված բարձրություն 0,54 մ, թանձրություն 0,36 մ։ Մակերեսին կողմը պահված է կամարաձև փորագրված գծի մը մեկ մնացած մասը, որուն մեջտեղը կգտնվի Խրեք կարգով փորաքանդակ արձանագրություն (պատկ. 2).

Պատկ. 2

...ՌԾԽ
...ՄԱՏԱ
...ՇՕ

Գրերուն մեծությունը 7-էն մինչև 12 սանթ. է։ Տապանաքարը կպատկանի Շուուութեն սերած հանգուցյալի մը, ինչ-որ կհաստատվի առաջին վանկեն իր

գյուղին անունը։ Տարեթիվն կհաստատվի հազարավորը, հարյուրավորը և տասնավորը, որու հիման վրա կարելի կըլլա եզրակացնել, որ տապանաքարը 1691-էն մինչև 1700 տարիներուն կպատկանի։

4. Կրանիտյա տապանաքարի բեկոր։ Պահված է Սոֆիայի հնագիտական թանգարանին մեջ, ինվ. № 286։ Չափեր. պահված երկարություն 0,56 մ, պահված բարձրություն 0,42 մ, թանձրություն 0,33 մ։ Պահված է քարին աջ կողմի կեսին վերի մասը միայն։ Տապանաքարի մակերեսին կողմը պահված է երկու կարգով փորագրված արձանագրություն մը, որուն ներքևի կողմը կնշմարվի երեք տառերու միայն վերի մասը (պատկ. 3).

Պատկ. 3

.....ՇՌԹՅԻ
.....ՆԱՉԱՐ ՈՐ
.....

Այս տապանաքարը կարելի է վերագրել 18-րդ դարու առաջին կիսուն։

5. Խոշորահատ ավազաքարե տապանաքար։ Պահված է «Սոֆիայի քաղաքին» թանգարանին մեջ։ Չափեր. երկարություն 1,42 մ, լայնություն 0,40 մ, բարձրություն 0,78 մ։ Մակերեսին կողմը փորված հինգ կարգով արձանագրություն (պատկ. 4).



Պատկ. 4

Արձանագրության բնագիրը

ԱՅՍ ԷՏԱՊԱՆ

ՇՌԹՑԻՀՐԱՊՆ

ՏԻՈՐԴՈՀԱՆՈՐՓ

ԽԵՑԱՎԱՌՔՍ

ԹՌՃՄԸՅՆԻԷԻՆ

Արձանագրության լուծումը

Այս է տապան

Շ(ու)ռ(ու)թ(ե)ցի Հ(այ)րապե-

տի որդ(ի) Ոհան(ին) որ փ(ո)-

խեցավ Առ(արչի) ք(րիսթո)ս

թ(վին) ռծը (1158—1709) հ(ու)ն(իս)ի է-ին (7)։

Տառերու բարձրությունն է 3,5—6,5 սանթ.։ Միակ կապգիրը կգտնվի երրորդ կարգին վրա «ո—ր» տառերը ՈՐԴԻ բառին մեջ։

Սույն արձանագրությունը հրապարակված է Գր. Յություճյանի կողմե[3]։

6. Ուղղորահատ ավազաքարե տապանաքար։ Կպահվի «Սոֆիայի քաղաքի» թանգարանին մեջ։ Չափեր. երկարություն 1,23 մ, լայնություն 0,59 մ, բարձրություն 0,31 մ։ Քարին բարձրության կողմը կա երեք կարգ փորագրված արձանագրություն (պատկ. 5).

3 Գր. Իւթիւճեան, նույն հոդվ., էջ 170։



Պատկ. 5

Արձանագրության բնագիրը

ԱՅՍ ԷՏՊԱՆՇՌԹԵՑԻԱԳԷՍԻՈՐ

ԴԱՎՌԻՄԻՆՈՐՓՈԽԵՑԱԼԱՌ

ՔՍԽՎՆՌՃՂԵԻՆՓԵՏՐԴԻ

Արձանագրության լուծումը

Այս է տ(ա)պան շ(ու)ռ(ու)թեցի Ագէսի որ-
դ(ի 3)ավ(ր)ումին որ փոխնցաւ Առ(արչի)
Ք(րիսթո)ս(ի) թվ(ի)ն ռճղե-ին (1195—1746) փետր
(վար) դ-ի (4)։

Տառերում բարձրությունը 5,5—7 սանթ. է։

7. Մարմարյա տապանաքարի վերի մասը։ Կպահվի «Սոֆիայի քաղաքիս թանգարանին մեջ։ Չափեր. պահված երկարություն 0,87 մ, լայնություն 0, 72 մ, թանձրություն 0,10 մ։ Տապանաքարի վերի մասին աջ անկյունը պակաս է։ Վերի երկու անկյուններուն մեջ վեցական թերթերով ռոզեթաներ են փորագրված։ Սալաքարին մակերեսին կողմը կա չորս կարգով բարձրաքանդակ արձանագրություն, որը տեղ-տեղ բավական մաշված է (պատկ. 6)։

Պատկ. 6

Արձանագրության բնագիրը
ԱՅՍԷՏԱՊԱՆ... ԱՆ.. ՍՏԵԱՆՀԱՆԳԵԼԿԱՆԱ
ՆԻՕՍԻՈՐԴԻ... ԱՆԳԵԼՕՅԱՆԷՍԻՆՈՐՓՈԽԵՅԻ
ԱՍԴԷՆԻԿԵԱՆ... ՍԻՐՎԻՆՀԱՅՕՅ
ՌՍԿԳԻՆՅՈՒԼ... ԺԵԻՆ

Արձանագրության լուծումը
Այս է տապան [Հ]ան[գ]ստեան Հանգե(ա)լ Կանա-
նիոսի որդի [Հ]անգե(ա)լ Օհանէսին որ փոխեց(ա)
ասդէն իկեան[ր]ս ի թվին Հայոց
ռսկգ (1263—1814) հուլ[իսի] ժե-ին (15)։

Տառերուն բարձրությունը է 4,5—5 սանթ.։ Կապգրերն են. «ս—է» ԱՆՍ է բառին մեջ, «պ—ա» ՏԱՊԱՆ-ին մեջ, «կ—ա» ԿԱՆԱՆԻՕՍԻ-ին մեջ, «ո—ր» ՈՐԴԻ-ին մեջ, «ս—ի» Օհանէս-ին մեջ, «ո—ր» ՈՐ-ին մեջ, «ո—խ» և «ց—ւ» փոխեցաւ-ին մեջ։

8. Կրաքարե գերեզմանաքար հետևյալ չափերով. երկայնություն 1,62 մ, լայնություն 0,67 մ, թանձրություն 0,16 մ։ Կդանվի այժմու Հայկական գերեզմանատան մեջ և որպես հանդիստաքար կծառայեր Մակերեսին կողմը կա հինգ կարգ գրված բարձրաքանդակ մակագրություն (պատկ. 7).

Պատկ. 7

Արձանագրության բնագիրը
ԱՅՍԷ. ՏԱՊԱՆ. ՀԱՆԳՍՏԵ
ԱՆ. ՇՌՈՒԹԵՑԻ. ԵԱԻՐՈՒՄ
ԷՆՑ. ԱՒԵՏԻՍԻ. ՈՐԴԻ. ԱԼԷՔ
ՍԱՆԻՆ. ՈՐՓՈԽԵՑԱՎԻԹՎԻՆ.
ՌՄԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻԱԻՆ.
Արձանագրության լուծումը
Այս է տապան հանգստե-
ան շ(ու)ռութեցի Եաւրում-
էնց Աւետիսի որդի Ալէք-
սանին որ փոխեցաւ ի թվին
ռմի (1220—1771) դեկտեմբերի ա-իս (1)։

Տառերու բարձրությունը 6—6,5 սանթ. է։ Կապգրերն են. «ս—է» ԱՅՍ է բառին մեջ, «ո—ւ» ՇՌՈՒԹԵՑԻ և ԵԱԻՐՈՒՄԵՆՑ բառերուն մեջ, «ո—ր» ՈՐԴԻ-ին մեջ։

Արձանագրությունը հրապարակված է Յուիյուլյանի կողմե[4]։

* * *

Վերև նկարագրված տապանաքարերու արձանագրությունները հավաստիք մրն են, որ 17—19-րդ դարերուն Սոֆիայի մեջ հայկական գաղութ մը գոյություն ունեցած է։ Հետաքրքիր է ե՞րբ, ուրանեղ՞ն և ի՞նչ պատճառներով են գաղթել հոս հայեր։ Ճշգրիտ տեղեկություններ Սոֆիայի առաջին հայ գաղթականության համար թրքական տիրապետության շրջանին կպակսին։ Ըստ պատմաբան Կ. Իրեչեքի, դեռ 15—16-րդ դարերուն հայ վաճառականներ կայցելին Պուլկարիո մեկ քանի քաղաքները[5]։ Իսկապես ալ Սոֆիայի հայ վաճառականներուն

[4] Դր. Իւթիւճեան, նույն հոդվ., էջ 170—171։

[5] Д-р К. Иречек, Пътувания по България, ч. II, 1899 г., стр. 122 и 140.

համար կհիշատակեն նաև արևմտաեվրոպական ճանապարհորդներեն Hans Dernschwam 1553 թվին և Wolffgang 1559 թվականին։ Համաձայն 21 հուլիս 1550 թվականին Սոֆիայի դատարանեն հրատարակված հյուքեթի մը, կհիշատակվի Աշուլպանի որդի Ալտկյոզ անունով հայու մը համար, որը 120 աքչէ կպարտեր Նիքոլայի որդի Փեթրին[7]։ 18-րդ դարուն, Սոֆիայի ծաղկած վաճառականությունը մեծ թվով հայեր հոն քաշած էր[8]։ Այդ ասենեն կսկսին նաև Սոֆիայի մեջ հաստատված ավելի բազմաթիվ հայկական գաղութի մը համար տրված տեղեկությունները, ինչպես նաև քանի մը հայկական աղբյուրներե, նույնպես թրքական պետական վավերագիրներե, մեկ քանի ճանապարհորդներե տրված տեղեկություններե և կամ դեսպանական միսիաներու անդամներու կողմե։ Այսպես, 1605 թվականին ճանապարհորդ Johan Wild տեղեկություններ կուտա Սոֆիա ապրող հայերու մասին[9]։ Ըստ հայ քրոնիկագիր Դարանաղցիին, 1606 թվականին շատ հայեր Էրզրումի, Կարսի և Երևանի շրջաններեն, ալալիներու անգութ խժդժություններեն փախչելով, բնակեցան նաև Ռումելիի մեջ[10]։ Դարանաղցիիս սույն տեղեկությունը կհաստատվի նաև 1610 և 1619 տրված սուլթանական երկու ֆերմաններե, որոնք ղրկված են Սոֆիայի, Ֆիլիպեի և Զակրա-ի-աթիք (Սթարա-Զակորա)-ի դատներուն, որպեսզի ճիզիէ[11] կոչված տուրքը, այդ նահանգներուն մեջ ցրված, Անատոլիաեն եկած հայերեն հավաքեն[12]։

Ըստ Սոֆիայի գատրլրքի թրքական սիճիլթներեն, Սոֆիայի հայերը 17-րդ դարուն իրենց առաջնորդարանը ունեին, ինչպես նաև փոքրիկ եկեղեցի մը։ Հայերու մեծամասնությունը արհեստավորներ էին. ոսկերիչներ, դարբիններ, հացագործներ են։ Նույնիսկ դարբիններուն դասը (esnaf), որը կբաղկանար թուրքերե, հայերե և պուլկարներե, ուներ իր բեհայան (առաջնորդ) Ուստա Վարդազարյան հայը, իսկ անոր օգնականը էր եկիդպաշի Սթոյո փոփ Փեթրով պուլկարը։ 1669-ի սիճիլթի մը մեջ նշանակված է, թե Սոֆիայի «Աթպունար» թաղի վարպետ հացագործը հայ մըն էր Օհանես անունով[13]։

1640-ին կաթոլիկ եպիսկոպոս Բեթր Պոկտան Պաբշիչ Սոֆիայի մեջ կհանդիպի շուրջ 200 տուն հայերու, մոտավորապես 1600 հոգի։ Անոնք սակայն բաժնված էին երկու մասի և իրար հերետիկոս կանվանեին[14]։ Տասնին տարի վերջը — 1659-ին Սոֆիայի հայերու մասին կհիշատակե Іован Кјароманн „Questa atta é Metropoli della Bulgaria é assai grande, molto popolata da Turchi, Grechi, Armeni, Ragugei, Ebrei...“[15].

---

6 Проф. д-р А. Иширков, Град София през XVII век, 1912 г., стр. 49.

7 Herbert W. Duda und Galab D. Galabov, Die Protokollbücher des Kadiamtes Sofia, München, 1960, str. 38—39.

8 Проф. д-р А. Иширков, Град София..., стр. 48.

9 Johan Wild, Neue Reysbeschreibung eines gefangenen Christen, wie derselbe neben anderer Gefährlichkeit zum sibenden etc., Nürnberg, 1623, str. 37.

10 «Ժամանակագրություն Դրիգոր վարդապետի Կամախեցւոյ կամ Դարանաղցւոյ», Երուսաղեմ, 1915, էջ 322։

11 ՃԻԶԻԷ — թրքական ղինվորական տուրք, որը երկրին քրիստոնիա բնակիչներեն կհավաքեին։

12 H. Duda und G. Galabov, Ibid., str. 113—114.

13 Проф. д-р А. Иширков, Град София..., стр. 57 и 63.

14 Eusebius Fermendzin, Acta Bulgariae ecclesiastica ab a. 1565, usque ad a. 1799, Zagrabiae, 1887, p. 73.

15 Письма Іована Кјароманн с пута преко Балканског полуострова 1659 г., Споменик 47, 1909 г., стр. 105.

Այսինքն «Այս քաղաքը (Սոֆիան — Ա. Մ.) Պուլկարիոյ մայրաքաղաքն է, բավական ընդարձակ է և իր խիտ բնակչությունը կբաղկանա Թուրքերե, հույներե, հայերե, ոակուզացիներե, հրեաներե են»։

Ինչպես որ ավելի վերը հիշեցինք, Սոֆիայի մեջ հայերը ունեին իրենց եկեղեցին, սակայն երբ հիմնադրված է ան՝ անհայտ կմնա[16]։ 1620 թվականի Թրքական հյուանթի մը մեջ հիշված է Հակոբի որդի Մակրը (Մկրտիչ — Ա. Մ.) քահանայի մը անունը[17]։ Իսկ 18-րդ դարու Թրքական սիճիլաթներուն մեջ նշանակված է Սոֆիայեն ուրիշ հայ քահանայի մը անունը «ermeni papazı Kirkor»[18]։ Կաֆացի Մարտիրոս վարդապետին ճամբորդական նոթերեն կտեղեկանանք, որ 1763-ին սույն եկեղեցիին մեջ կպաշտոնավարեր Յունան անունով քահանա մը, որը գինեմոլ մըն էր և օրն ի բուն իր ժամանակը գինետան մեջ կանցներ[19]։

1692 թվականին, Սոֆիայի հայերուն կողմե սուլթանին ղրկված վավերագրի համաձայն, հայերը իրենց եկեղեցին նորոգելու համար հրաման կխնդրեն, որը կարտոնվի իրենց, այն պայմանով որ եկեղեցիին նախկին շինության վրա որևէ նոր մաս մը չկառուցանեն։ Նույն վավերագրեն կտեղեկանանք նույնպես, որ Սոֆիայի հայերը այս ատեն «Քալոյանսքա մախալա» բսված թաղամասը կբնակեին[20], որը «Պալի էֆենտի» կոչված թաղին քով կգտնվեր[21]։

Հայերուն թիվը, Սոֆիայի մեջ, օր ըստ օրե կշարունակվի բաղմանալ, գլխավորապես Արևելյան Հայաստանեն եկած գաղթականներով։ Վերոհիշյալ տապանաքարերուն արձանագրություններեն կտեսնենք, որ մեռյալներուն տոհմը Նախիջևանի Սուռութ գյուղեն կսերի, ինչպես նաև մաս մըն ալ գաղթած են Մալաթիայեն, Տիարպեքիրեն[22] են։ Սոֆիայի հայերու նյութական վիճակը համեմատաբար լավ է եղած։ Վաճառականներուն աչքառու մեկ մասը հայեր էին, որուն համար կվկայեն Ավստրիո դեսպանը Կերարտ Քորնելիուս Տրիշ[23] և հայր Լուկաս Ինճիճյանը[24]։

19-րդ դարու սկիզբը սակայն սույն պատկերը արմատապես փոխված է։ Հայերուն տնտեսական դրությունը վատթարացած է և անոնց թիվը հետզհետէ պակսած։ Ասկե զատ 19-րդ դարու առաջին քառորդին Սոֆիայի մեջ ժանտախտի համաճարակը քանի մը անգամներ կատղած ըլլալով՝ հայերուն մեկ կարևոր մասը Պուլկարիո պանդուխտ քաղաքները կսկսին գաղթել, ուրտեղ առաջուց հայկական գաղութներ հաստատված էին։ Այնպես որ 1828—1829-ի ռուս-թուրքական պատերազմեն հետո Սոֆիայի մեջ գրեթե հայեր չեն մնացած։

---

16 Սույն կիսագետնափոր եկեղեցին կգտնվեր Սոֆիայի կեդրոնը, այժմու Լենին հրապարակին վրա։ Ըստ Քոնսթ. Իրեչեքի այս եկեղեցին Սոֆիայի ամենահին եկեղեցիներեն մին էր (տե՛ս դ-ր К. Иречек, Софийски старини, Периодическо списание, V, 1883 г., стр. 131.

17 H. Duda und G. Galabov, ibid., str. 257.

18 Проф. д-р А. Иширков, София през..., стр. 48.

19 Հ. Պոտուրյան, Մարտիրոս Ղրիմեցւոյ դերթուածները, Նավասարդ, Բուրբեղ, 1923, 1924, էջ 74։

20 Панчо Дорев, Документи из турските държавни архиви (1564—1872 г.), том III, ч. I, София, 1940 г., стр. 28.

21 Ал. Монеджикова, София през вековете, София, 1946 г., стр. 260.

22 Գր. Իրիճեան, նույն հոդվ., էջ 170—171։

23 Л. Милетич, Стари пътувания през България. Герард Корнелиус Дриш (1718 г.), Собрник народни умотворения, т. VI, 1891 г. стр. 127.

24 Հայր Ղուկաս Ինճիճեան, Աշխարհագրութիւն չորից մասանց, Վենետիկ, 1804, էջ 9։